ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ. Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների). *Երևան, «Զանգակ–97», 2004, 168 էջ:*

Հայ ժողովրդի կազմավորման դարաշրջանի և Հայկական լեռնաշխարհի վաղ պատմության վերհանման գործում, սեպագիր այլ աղբյուրներին զուգահեռ, բացառիկ կարևորություն ունեն խեթական տերության արքունի դիվանները: Այս առումով ուշագրավ է պատմական գիտությունների դոկտոր Արամ Քոսյանի հեղինակած նոր ուսումնասիրության ծնունդը:

Գրախոսվող աշխատությունը բաղկացած է երկու հիմնական բաժնից՝ «Տեղանուններ»-ից և «Տեքստեր»-ից, առկա են օգտագործված գրականության ընդարձակ ցանկ և համակարգված անվանացանկեր: Առաջին բաժինը (և աշխատությունը ընդհանրապես) ներկայանում է որպես բառարան՝ ներառելով ցայսօր հայտնի խեթական սեպագիր աղբյուրների այն բոլոր տեղանունները, որոնք վերաբերում են կամ որոշակիորեն առնչվում Հայկական լեռնաշխարհին: Վերջին դեպքում ընտրությունը պայմանավորված է տեղագրական հարցեր քննարկելիս դրանց ունեցած հաճախ որոշիչ նշանակությամբ: Աշխատությունն առանձնանում է իր կառուցվածքով մասնագետ-ընթերցողին մատուցելով քննարկվող տեղանունների բոլոր հիշատակումները լատիներեն տառադարձմամբ, ներկայացնում դրանց շուրջ արտահայտված կարծիքները թե՛ անվանումների կազմության և թե՛ տեղադրության շուրջ՝ հստակորեն սահմանազատելով հեղինակային դիտարկումները:

Աշխատությունը, չնայած դիտվում է որպես բառարան, սակայն իրականում այն մեզ է ներկայանում որպես դիտական ինքնուրույն մի հետազոտություն: Դրանում ընդհանուր առմամբ քննված է Լեռնաշխարհի սահմաններում առավել կամ պակաս հավանականությամբ տեղորոշվող շուրջ հարյուր վեց տեղանուն (որոնցից տասներկուսը՝ պակասավոր), ներառելով նաև լեռնանուններ ու գետանուններ, ի հավելումն՝ դրանց հետ հիշվող տասնյակ դիցանուններն ու անձնանունները:

Գրախոսվող աշխատության հետաքրքիր իսկ ծանոթությունը հուշում է, որ այն խնդրին վերաբերող խեթական աղբյուրներից քաղված տվյալների կամ բազմալեզու ուսումնասիրությունների մեխանիկական միահյուսում չէ, այլ մի ինքնուրույն հետազոտություն՝ քննարկվող հարցերի շուրջ հեղինակի ուրույն մոտեցումներով: Այս վերջիններս մատուցվում են նրբանկատորեն՝ առանց նախորդ հետազոտողների տեսակետները և վաստակը նսեմացնելու: Ընդորում, ուսումնասիրության հեղինակը զերծ է մեզանում հաճախակի հանդիպող այն արատավոր մոտեցումից, երբ մի թվացյալ փաստ կամ փաստարկ ավելացնելու միջոցով շատ հաճախ «հայտնագործվում են» խնդրի լուծումներ, միաժամանակ և հեշտությամբ ժխտվում անհամեմատ լավ փաստարկված հները: Ասվածին կարելի է հավելել հեղինակի ձգտումը՝ ներկայացնելու յուրաքանչյուր մասնավոր խնդրին վերաբերող կարծիքների հնարավորինս ամբողջական շրջանակ, միաժամանակ չփորձելով ընթերցողին պարտադրել սեփական, հեղինակային կարծիքը: Նման մոտեցման անհրաժեշտությունը, ցավոք, միշտ չէ, որ դիտվում է կամ անդամ գիտակցվում հայագետների որոշ շրջանակներում:

Հեղինակային եզրահանգումների առնչությամբ միաժամանակ կկամենայինք ընդգծել հետևյալը: Աշխատանքի ողջ շարադրանքը, ի մասնավորի նրանում հղված տեղանունների առնչությամբ տրված խիստ հակիրճ, բայց հստակ եզրակացությունները վկայում են, որ դրանք անկասկած հեղինակի երկարամյա ուսումնասիրությունների արդյունք են: Այս առումով աշխատանքը ներկայանում է որպես քննարկվող հարցերի առնչությամբ նրա մոտեցումների յուրատեսակ ամփոփագիր: Մասնավոր խնդիր-

ների առնչությամբ, հատկապես տեղագրական հարցերին վերաբերող դիտարկումները պայմանավորող փաստարկները, որ առաջին հայացքից թվում են բացակայող, կարելի է գտնել աշխատության երկրորդ գլխում, ըստ հղվող տեքստերի: Այս վերջիններս էլ կազմում են աշխատության երկրորդ բաժինը, որի դերը չի սահմանափակվում առաջինի համար սոսկ իբրև ենթատեքստ ծառայելով: Այն ընդգրկում է Հայկական լեռնաշխարհին վերաբերող խեթական սեպագրի ցայսօր հայտնի ողջ նյութը ներառելով նաև հայագիտությանն անհայտ մնացած, այդ թվում անգամ չհրատարակված աղբյուրներ:

Աշխատությունը հարուստ է մասնավոր խնդիրների առնչությամբ արված նոր դիտարկումներով և եզրահանգումներով (տե՛ս, օրինակ, (KUR) ^{URU}Azzi, ^{URU}Ḫatra (Ḫalara), ^{URU}Dugg/kk/qqam(m)a(na), (KUR) ^{URU}D/Tankuwa, ^{URU}Ura բառահոդվածները): Առկա է քննական մոտեցում սեպագիր աղբյուրների սկզբնական հրատարակությունների և դրանց հետագա վերարծարծումների հանդեպ: Ավելորդ չէ նշել, որ կիրառվել է աղբյուրագիտական և մասնագիտական մեծածավալ գրականություն ընդհուպ մինչև նորագույն հրատարակություններ:

Դժվար է մեկ առ մեկ թվարկել այն էական ձեռքբերումները, որ առկա են այս աշխատանքում. գրանք բազմաթիվ են: Թերևս սահմանափակվենք հակիրճ ներկայացնելով հիմնական եզրակացությունները.

ա. Հայկական լեռնաշխարհին վերաբերող խեթական սեպագիր ներառյալ նաև հայագիտությանն անհայտ մնացած և նորահրատ նյութի համակարգված մատուցում,

բ. Հայկական լեռնաշխարհի բազմաթիվ տեղանունների ընթերցումների և տեղադրումների ճշգրտում, իսկ նվազագույնը՝ առկա կարծիքների մեկտեղում, մասնագետ-ընթերցողին հնարավորություն տալով անելու սեփական եզրակացություններ,

գ. սեպագիր տեքստերի քննարկվող հատվածների բովանդակության ամփոփ ներկայացում: Սա նմանատիպ ուսումնասիրությունների համեմատությամբ (խոսքը մասնավորապես վերաբերում է սեպագրագետներին քաջածանոթ Repertoire Geographique des Textes Cuneiformes մատենաշարին) անհրաժեշտ և միանգամայն տեղին նորամուծություն է, որը, ի դեպ, կարող է ծառայել որպես աղբյուր գիտական այլ ուղղությունների համար ևս (օր. գիցաբանության),

գ. Ի դեմս գրախոսվող աշխատության, ըստ ամենայնի, գործ ունենք արդյունավետ և հետագա ուսումնասիրությունների համար լայն հեռանկարներ բացող հետազոտության հետ, ուր ներկայիս գիտության ընձեռած սահմաններում փորձ է արված այս բնագավառի մասնագետ-ընթերցողին մատուցելու հնարավորինս նպատակային ու առավելագույնը:

Միաժամանակ կցանկանայինք նշել մի քանի նկատառումներ: Մասնավորապես, որոշ դեպքերում, արտահայտելով մասնագիտական գրականության մեջ առկա կարծիքները մասնավոր խնդիրների առնչությամբ, բացակայում է հեղինակի վերաբերմունքը տվյալ կարծիքների և դրանց հավանականության հանդեպ (օրինակ՝ ^{URU}He/im(m)uwa, ^{URU}Kutmar, KUR $^{(URU)}$Sarazzi բառահոդվածներում): Դա հնարավորություն կտար միաժամանակ և ունենալու շարադրանքի մասնագետ-ընթերցողի համար ցանկալի, քննական ընթացք: Անշուշտ, հնարավոր չէ բոլոր հարցերին անդրադառնալ, առավել ևս լուծումներ տալ մեկ ուսումնասիրության մեջ առկա սուղ նյութի, ինչու չէ նաև սահմանափակ ծավալների պայմաններում: Այս առումով հույս ենք հայտնում, որ հեղինակի կողմից կամ նրա գլխավորությամբ իրականացվելիք հետագա աշխատանքների արդյունքում հայ գիտությունն ի վերջո կստանա համալիր մի ուսումնասիրություն, համոզված ենք՝ հայագիտությանը հուզող մի շարք հարցերի պատասխաններով:

Աշխատության մեջ օգտագործված են ինչպես սեպագիր, այնպես էլ հաջորդող դարաշրջանների գրավոր աղբյուրներ՝ գլխավորապես անտիկ և հայկական: Սեպագիր տեղանունների հետ ծանոթությունը, բնականաբար, հուշում է հետազոտողին գրանց հավանական զուգահեռները որոնել

նաև այլ աղբյուրներում (օր. խեթական URUPittiyarig/k/q(a)-ն հիշվում է դեռևս վաղասորեստանյան աղբյուրներում (Բիթ-Ցարիգա), URUTe/im(m)iya-ն համադրվում է բյուզ. աղբյուրների Ցիմենոսի հետ): Այս առումով տողերիս հեղինակի համար հետաքրքրական է այն հարցը, թե խեթական աղբյուրներով ուրվագծվող Հայկական լեռնաշխարհի պատմական աշխարհագրությունը որքանով կարող է օգտակար լինել, օրինակ, ուրարտագիտական հարցերի լուծմանը: Մասնավորապես, արդյոք հնարավո՞ր է խեթական սեպագրի URUHe/im-(m)uwa, URUUtkunisa[], URUSala և այլ տեղանունների տակ տեսնել միջինասորեստանյան աղբյուրներից հայտնի Ուրու(ա)տրու՛ի միության քաղաքական միավորների (KUR/URUHim(m)e/u, KUR/URUUatqun, KURSalua և այլն): Եթե իրատեսական են նման համադրությունները, որոնց թիվը, ընդ որում, կարող է և ավելին լինել, ապա հնարավոր կլինի վերոհիշյալ երկրների տեղադրության խնդրում դիմել լրացուցիչ աղբյուրների օգտագործելով դրանց ընձեռած հնարավորությունները:

Աշխատության առաջաբանում նշվում է, որ բառարանում ընդգրկված չեն այն բոլոր տեղանունները, որոնք նախկինում տեղորոշվում էին Հայկական լեռնաշխարհի սահմաններում, սակայն իրականում գտնվել են Խաթթիի տարածքում (KURAš-suwa, URUSapagurwanta և այլն): Ամենևին կասկածի տակ չվերցնելով ասվածը միգուցե ցանկալի կլիներ առանձին ենթավերնագրի տակ ունենալ պարզաբանումներ՝ ցրելով հայագետների մեջ ծագելիք հնարավոր կասկածները:

Ցանկալի կլիներ նաև աշխատությանը կից ունենալ հավելված, ուր տրված կլիներին քննության վերցված տեղանունները հիշատակող, ինքնագիր եղանակով հրատարակված սեպագիր տեքստերը:

Վերջում պարզապես փաստենք. Արամ Քոսյանի «Հայկական լեռնաշխարհի տեղանունները» ուսումնասիրությունն անկասկած ծառայելու է որպես սեղանի գիրք խեթագիտությամբ և հայ ժողովրդի կազմավորման դարաշրջանի պատմությամբ զբաղվող ուսումնասիրողների համար:

ԵՐՎԱՆԴ ԳՐԵԿՅԱՆ